



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2029

Հ. Ա. Վ. Կ. 83

առ. 13


«Նորագույն «Անձնագիր» № 8

ՀՈՒՄՊԵՆՊՐՈԼԵՏԱՐԻԱԾ

ԵԿ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. ռուսերէնից Ա. Ս.



Թ Ի Ֆ Լ Ի Ռ Ո

Էլեմենտար ապրանք «ՀԵՐԱԿՈ» Ընկ. Մադարեան փող. № 5

1906

(191)

Հ Արմ.
2-57042

2-57042

Հ 1 JUL 2009
Տրպ

Տ Ն ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՍԱՆՔ-Ի Ն 8

1711
L-91

ՀԱՅՄԱՆՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԸ

ԵԿ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. ռուսելէնից Ա. Ա.

ԱԿԲ. № 20477

Թ Ի Ց Լ Ի Ս
Եթերական սպառան «ՀԵՐՄԱՆ» բնկ. Մայդանի փող. № 5
1906 (191)

2029

ՀՈՒՄՊԵՆՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԸ

ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

I.

Ի՞նչ է լումպենպրօլետարիատը։ Ամենքին յայտնի է, որ հասարակութեան զանազան դասակարգերը յեղափոխական շրջաններում տարբեր գերեր են խաղացել։ Մի քանի դասակարգեր, օրինակ պրօլետարիատը, միշտ եղել են յեղափոխութեան ամենաջերմ կողմանիցներն ու պաշտպանները։ Բանտորները միշտ յեղափոխութեան առաջարժիշներն են եղել. նրանք են ենթարկել ամեն տեսակ գրկանքների, որոնցով միայն պայմանաւորւած է յեղափոխութիւնը. նրանց ուսերի վրայ են ամբողջապէս ծանրացել յեղափոխութեան գոհները։ Այն ինչ միւս դասակարգերը, ինչպէս օրինակ, մասնը բուրժուազիան ու գիւղացիութիւնը, յաճախ փոխել են իրենց դիրքերը յեղափոխութեան վերաբերեալ։ Միևնույն յեղափոխութեան շրջանում նրանք կամ դուրս են եկել նրա գէմ, կամ աջակցել են նրա դարպացմանը։

Այստեղ ես կաշխատեմ ցոյց տալ, թէ ինչպէս են վերաբերել յեղափոխութեանը այն հասարակական գրուպաները—համախմբութիւնը, որոնք Մարքսի ժամանակից ստացել են լումպենպրօլետարիատ անունը։

Կապիտալիստական հասարակութեան մէջ գըտնուում են մեծ քանակութեամբ մարդիկ, որոնք չեն պատկանում ոչ մի դասակարգի—զրանք հասարակութեան տականքներն են։ Նրանք կամ թողել են ամեն



40733-63

մի սիստեմատիքական աշխատանք, կամ իրենց կեանքում երբէք աշխատանք ասած բանդ չեն իմացել և գէպի նա ոչ մի հակում չեն զգացել. նրանք հասել են վերին աստիճանի չքաւորութեան և բարոյական անկան: Ապրում են նրանք պատահական աշխատանքներով, մուրացկանութեամբ, գողութեամբ, կողովուտով և այլն:

Հարբեցողութիւն, անբարոյականութիւն, թղթախաղ — ահա նրանց սովորական բաւականութիւնները:

Հասարակութեան հէնց այդ տականքներից է կազմւում լումպենսպրօլետարիատը: Ռուսաստանում նրանք բռնեակների, բռնայակամանդների, սև հարիւրեակների և այլ անուն են կրում, Նեապոլում նրանք «լացցարօնի» են անւանում, Ֆրանսիայում «բօգեմա» և այլն:

Լումպենսպրօլետարիատը իրենից մի հասարակական դասակարգ չի ներկայացնում. նա բոլոր դասակարգերի թափթփուկն է: Տարբերութիւնը նրա և բանուր պրօլետարիատի մէջ նոյնքան մեծ է, որքան երկնքի և երկրի մէջ: Բանուր պրօլետարիատի վրայ հիմնւած է ամբողջ կապիտալիստական հասարակութիւնը. նրա կոշտացած ձեռքերով է ստեղծում ամբողջ ժողովրդական հարստութիւնը. նրա արտադրած յաւելեալ արժեքով են ապրում միլիոնաւոր խոշոր ու մանր շահագործողներ: Լումպենսպրօլետարիատը, ընդհակառակը, ինքն է ժողովրդի հաշւով ապրում, որովհետեւ նա կամ բոլորովին հեռու է կանգնած տնտեսական կեանքից, կամ շատ թոյլ կապերով է կապւած նրա հետ: Տարբերութիւնը բանուր դասակարգի և մնացած հասարակութեան մէջ — զա աշխատանքի և կապիտալի շահագործողների և շահագործողների մէջ եղած տարբերութիւնն է: Քիչ գիտակից պրօլետարները. այդ

պատճառով, ձգտում են մեղմացնել շահագործութիւնը, իսկ աւելի գիտակիցները ձգտում են բոլորովին ոչընչացնել այդ շահագործութիւնը. նրանց իդէալը սօցիալիզմն է:

Գիտակից բանւորը մասնաւոր սեփականութեան հակառակորդն է, նա տոգորւած է կօլեկտիւհամայն սեփականութեան գաղափարով, — մի գաղափար, որով արտադրութեան գործիքները պէտք է հասարակութեան ձեռքը անցնեն: Ընդհակառակը, լումպենսպրօլետարիատը տարբերութիւնը իր և մնացած հասարակութեան մէջ տեսնում է միայն նրանում, որ ինքը քաղցած և թշւառ է, հակագրելով այդ բանին ուրիշների հարստութիւնը ու կշտութիւնը: Լումպենսպրօլետարները նոյնպէս տրամադրւած են մասնաւոր սեփականութեան դէմ, բայց այդ տրամադրութիւնը արտայայտում է միայն նրանում, որ գողութեան, կողովուտի և խարբերայութեան միջոցով յափշտակում են ուրիշների գոյքը:

Վ. Լիբկնեխտը իր ճառերից մէկում, որ արտասանել է 1892 թ. գերմանական սօցիալ-գեմօկրատիական համագործարում, լումպենսպրօլետարիատի մասին ասաց հետեւեալը.

«Լումպենսպրօլետարիատ խօսքը գիտական արտայայտութիւն է, որ առաջին անգամ գործածել է Մարքսը: Նա ուղղակի հակապատկերն է յեղափոխական պրօլետարիատի, որը, շնորհիւ իր դասակարգային գիտակցութեան, համախմբւում է մի դասակարգային կազմակերպութեան մէջ և յեղափոխական կռւի ասպարէզ է դուրս զալիս՝ տիրապետող դասակարգերի դէմ: Լումպենսպրօլետարիատը կապիտալիզմի այն զոհերից է, որոնք կանգնած են պրօլետարիատից դուրս և չեն պատկանում ոչ մի դասակարգի... մի խօսքով,

Նա ժամանակակից կապիտալիստական հասարակութեան տուկանքն է»:

«Լումպենպրօլետարիատը կարող է շահագործել ժամանակակից բուրժուական հասարակութեան բոլոր թերութիւնները, — այն ինչ յեղափոխական պրոլետատը ձգում է վերջ դնել նրանց: Լումպենպրօլետարիատը դասակարգային կուր չի մղում ժամանակակից կազմի դէմ: Նա պատերազմ է յայտարարում սեփականութեան դէմ, ուսկայն այնչափ միայն, որչափ ինքը չի զլանում իւրացնել ուրիշի սեփականութիւնը: Փոխանակ ձգտելու վերացնել հասարակական գոյքի թալանումը, նա ինքն է դիմում գողութեան, և գրանով մի աւելորդ անգամ ևս ապացուցում իր կապակցութիւնը ներկայ կազմի հետ: Մի խօսքով, լումպենպրօլետարիատը — ոչ յեղափոխականներ են և ոչ սօցիալիստներ: Ժամանակակից հասարակութիւնը, որը անբարոյականացուցիչ ազգեցութիւն ունի մասսանների վրայ, ունի իր տականքները, որոնք ամենին յեղափոխական չեն, այլ ընդհակաւակը, արտադրում են յեղափոխական կուսակցութիւնների թշնամինների գլխաւոր կօնտինգենտը — քանակը: Տեղեկացէք, իմացէք, թէ որտեղից է հաւաքում ոստիկանատունը իր մատնիչներին ու շպիօններին և այլն: Համարեա թէ նրանք բոլորը դուրս են գալիս լումպենպրօլետարիատի շարքերից: Դրա համար է, որ յեղափոխական պրոլետարիատը միշտ զգուշանում է նրա հետ մի որևէ յարաբերութեան մէջ մտնելուց»:

Բանեոր դասակարգը, ըստ կարելոյն, պէտք է առանձնանայ լումպենպրօլետարիատից: Առաջինը, այն պատճառով, որ տիրապետողները, հարուստ դասակարգերը ամեն ջանք են գործ դնում, որպէսզի դիտմամբ նրանց մի կոյտի մէջ խառնեն և բանւոր-

ներին վերագրեն այն բոլոր յանցանքներն, որոնք կատարում են հէնց իրենց — կապիտալիստների ծառաները — լումպենպրօլետարիները:

Երկրորդ, այստեղ շատ դժւար է խիստ սահման անցկացնել այդ երկու կատարելապէս որոշւած կատեգորիաների մէջ: բանւորների և լումպենպրօլետարիատի մէջ գոյութիւն ունի, ինչպէս և ամենուրեք բնութեան մէջ, մի շարք անցողական աստիճաններ:

Իւրաքանչիւր կապիտալիստական հասարակութեան արդիւնաբերական պահեստի գնդի*) տականքում պատահում են մարդիկ, որոնք մօտ են կանգնած լինում լումպենպրօլետարիատին: Նրանք չեն նմանում բանւոր պրոլետարներին և աննկատելի կերպով անցնում են լումպենպրօլետարիատի խաւար շարքերը: Այստեղ մտնում են զանազան կատեգորիաների մարդիկ՝ ծեր ու երիտասարդ, կրթւած ու խուար, ազնիւու փչացած: Այստեղ մենք տեսնում ենք ոչ միայն պրօֆեսիօնալ գողերի ու լրբերի, այլ և ազնիւ մարդկանց՝ բարձր և վեհ սկզբունքներով, որոնք անընդունակ են հեռանալ թափառական ազատ կեանքից:

Ով կարդացել է Գօրկու գրածքները, նա լաւ դիտէ, թէ որքան ամեն տեսակի տիպեր են հանդիպում մի ժամանակ «մարդ եղածների», ոյատակումը ապրողների մէջ:

Սակայն, ժամանակը նրանց բոլորին էլ հաւասարեցնում է: Ով այդ շրջանում ապրում է շատ թէ քիչ յարատե ժամանակ, նրա մէջ վերջ ի վերջոյ հանգչում է վերջին մարդկային զգացմունքը: Հազիւ է պատահում որ մէկը դուրս գայ այդ ճահճից. համարեա ամենքը

*) Արդիւնաբերական կամ բանւորական պահեստի նունդ կոչում է գործազուրկների բանակը: Ծ. Թ-

աւելի ցած ու ցած են ընկնում, մինչև որ վերջնականապէս չեն կորչում:

II.

Լումպենպրօլետարիատի «Հերոսական սիրազոր ծութիւնները»

Ո՞րն է լումպենպրօլետարիատի դերը յեղափոխութեան ժամանակ. նա ակտիւթէ պասնիւ մասնակցութիւն է ունեցել և հւմ կողմն է բռնել:

Ծանօթ լինելով լումպենպրօլետարիատի բնաւորութեան և հոգերանութեան հետ, այդ հարցերին կարելի է տալ միանգամից որոշ պատասխաններ: Հաւարրերը, ամենազգայուն ու կրակոտ բնաւորութիւնները, որոնց մեջ դեռ չի մարել վերջնականապէս մարդկային զգացմունքները, անշուշտ ակտիւ կերպով աջակցել են ժողովրդին Բաստիլիայի*), Վերսալի, Տիւլերի առման ժամանակ, ինչպէս և այլ արանման գործերում: Եւ որովհետև լումպենպրօլետարիատի այդ տարրերը դրանով ոչ մի բան չէին կորցնում, ուստի նրանք յայտնի մօմենտներում ընդունակ են հանդիսացել որոշ չափով ոգեռութիւն արտայայտել: Հասարակական ոյժերի անսովոր բարձրացման, փոթորկալի դէպքերի շրջաններն են այն մթնոլորտը, որ նրանք զգում են իրենց, ինչպէս ձուկը ջրում: Նրանք կ'օգնեն բարիկադներ շինելու ժամանակ, լաւ նշան կդնեն սպաներին կամ ժանդարմներին «վերցնե-

*) Բաստիլիան — բանտային բերդ էր Պարիզում, որը ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ 1789 թ. յեղափոխակաների ձեռքով դրաւուեց և կործանվեց:

Ծ. Թ.

լու» համար, նրանք ճարպիկութեամբ ժողովրդի վրայ յարձակւող զօրքի յետեռում կյայտնւեն, զարմանալի խիզախութիւն ու քաջութիւն ցոյց կտան նոյն իսկ սատանայի տռաջ, և միենոյն ժամանակ յարմար դէպք չեն բաց թողնիլ՝ հասարակութեան գրանցները մաքրելու, խանութ կողոպտելու, պանդոկանոց հրդեհելու, կոնծելու ու հարքելու՝ կործանիչ անբարոյականացում ու վհատութիւն առաջացներով դրանով պրօլետարիատի շարքերի մէջ: Այն աննշան օգնութիւնը, որ նրանք հասցնում են յեղափոխութեան, ժողովրդի բացարձակ կուի ժամանակ, շատ թանգ է նստում: Նրանց միջամտութեամբ անխուսափելիօրէն առաջացած կասար միքանի անգամ գերազանցում է նրանց հասցրած օգտից:

Պատմում են, որ 1871 թւի Կօմմունայի ժամանակ Տիւլերը կամմենում էր տաժանակիր աշխատանքի գատապարտաւածներին բաց թողնել բանտից, յուսալով որ նրանք կմիանան կօմմունարների հետ և այդպիսով կարելի կլինի այդ արձակւած աւազակների և գողերի կատարած յանցանքները ցցել կօմմունարների վրայ:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ բանւորները շատ գրգռած են եղել խույլիզանների հերոսական սըխրագործութիւնների դէմ:

Յուլիսեան և փետրուարեան յեղափոխութեան ժամանակ շատ յաճախ գնդակահարւած մարդիկ էին գտնուում «գող» վերնագիր կրող թղթերով: Բանւորները յաճախ ջարդում էին հասարակաց տները և անառականոցատէրերի ապաստարանները:

Նկարագրելով 1882 թւի բանւորական անկարգութիւնները կիօնում (Ֆրանսիայում), կը ապօտէկինը նկատում է, «հէնց որ այդ տեսակ դէպքեր են հանդիսանում, ժողովրդի չքաւոր դասակարգերը իրենց բարկութիւնը

բոլորից առաջ թափում են «գւարճութեան և անբարյոյականութեան» տեղերի վրայ. այդ հիմնարկութիւնները զայրոյթ են առաջացնում մասսաների մէջ նրանց տանջանքների ըստէներին, որովհետև այդ հիմնարկութիւնների մէջ նրանք տեսնում են հարուսաների էգօիզմի և անբարյականութեան մարմնացումը»:

Ընթեցողները անշուշտ մտաբերելիս կլինեն, թէ նրախի կատաղի կռիւ են մղել վարշաւայի և Բելօստոկի բանւորները այնտեղի անառականոցատէրերի դէմ:

Սակայն յեղափոխական շարժումների պատմութեան մէջ եղել են և այնպիսի դէպքեր, երբ յետաղիմական կառավարութիւնը դիմել է լումպենպրօլետարիատի օգնութեան, որպէսզի յետ խլի կամ ամրացնի իր տիրապետութիւնը և խորտակի բանւորների ոյժը:

Շնորհիւ լումպենպրօլետարիատի «հերոսական» սխրագործութիւններին, բեակցիան այդ դէպքերում կատարելապէս յաղթանակում էր:

Այստեղ մենք կնկարագրենք երեք դէպքեր, որոնք տեղի են ունեցել 1848—1849 թ. յեղափոխութիւնների ժամանակի:

Առաջի դէպքում լումպենպրօլետարիատը կազմակերպւած չի եղել, իսկ վերջին երկու դէպքերում նա ասպարէզ է դուրս եկել, ինչպէս կազմակերպւած ոյժ:

ա) Լացցարօնիները նեապօլում.

Իտալիայի հարաւում ազգաբնակութեան մէծամասնութիւնը չարքաշ կեանք է վարում, մի կերպ պահպաննելով գոյութիւնը: Չքաւոր ժողովուրդը այնտեղ օրերով պարապ-սարապ չափում է փողոցները: Այնտեղի սքանչելի ու տաք կլիման հնարաւորութիւն է տա-

լիս նրանց տարւայ մեծ մասը անցկացնել բաց երկնքի տակ, առանց բնակարան և համարեա առանց հագուստ ունենալու:

Միայն նեապօլում այդ լումպենպրօլետարների (լացցարօնի) թիւը 25—30 հազարից պակաս չի: Շնորհիւ ֆանատիկոս (մոլեւոանդ) հոգեորականութեան ազգեցութեան, նեապօլի լումպենպրօլետարիատը տասնեւութերդդ դարի վերջում դարձաւ կղերականութեան, միահեծան իշխանութեան և ըէակցիայի այլ մութ ուժերի յուսալի ապաւէնը:

1789 թւին նա ամենասուսկալի կերպով յարձակւում է ազատամիտ ինտելիգենցիայի վրայ, որը յենեւելով ֆրանսիական յեղափոխական բանակի յաղթանակի վրայ, ցանկանում էր առաջւայ. միապետութեան փոխարէն հիմնել հանրապետութիւն: Լումպենպրօլետարիատը դրա համար հաշիւ տեսաւ նրա հետ իր ուզածի պէս: Նման դէպքեր կը կնուցին շատ անգամներ են:

Ի գիմաց լացցարօնիների նեապօլի Բուրբոնները (միապետականները) միշտ իրենց ձեռքի տակ ունէին խաւար, մոլեգնի մասսա, որի վրայ միշտ յենւում են բոնապետները: Բաւական էր ձեռքի: մի շարժում, որպէսզի լացցարօնիները կատաղած: յարձակէին ողաւաճաններից և «բունտովշիկներից» վրայ: Նրանք մասաւանդ մեծ ենանդ ցոյց տւին 1848 թւի մայիսի 15-ին:

Ինչպէս յայտնի է, նեապօլի արքա Ֆերդինանդ 2—դը հարկադրեց փետրարի տասին (1848 թ.) սահմանադրութիւն տալ և ժողովրդական ներկայացուցիչների խորհուրդ հրաւիրել: Սակայն շուտով նա նորից իրեն բաւական ուժեղ զգաց, որպէսզի վերականգնենի միապետութիւնը: Մայիսի տասնեւինգին նա արձակեց ժողովրդական ներկայացուցիչների խորհուրդը:

Նեապօլի գեմոկրատները նոյն օրը և եթ բարձրացրին ապստամբութեան դրօշակը, որը սակայն շուտով ճնշւեց կաշառւած զօրքի օգնութեամբ: Լացցարօնիները աջակցում էին զօրքերին: Յրւելով ամբողջ քաղաքի մէջ, նրանք սկսեցին հրդեհել տները, կողոպտել, սպանել ազատամիտներին, առանց սեռի և հասակի խտրութեան:

Այդ վայրենի խժութութիւններից և բռնութիւններից յետոյ Նեապօլում նորից թագաւորեց խաւարքէակցիան, որը և մնաց մինչև օօ—ական թուականների յեղափոխութիւնը, երբ, վերջապէս, մի անգամ ընդմիշտ տապալւեց բռնապետութիւնը:

Բ) «Մօքիներ» Պարիզում 1848 թ. յունիսին.

Վեց շաբաթ էր անցել այն ժամանակից, երբ Նեապօլի լացցարօնիները օգնեցին Ֆերդինանդ 2-րդին վերականգնեցնել համարեա կորցրած միապետութիւնը, և ահա լումպենպրօլետարիատը նորից ասպարէզ է գալիս, բայց միայն մի այլ տեղ, Պարիզում: Այս տեղ լաւ կազմակերպւած լինելով, նա օգնում է բռնժութապիային, վայրենի կատաղութիւն է ցոյց տալիս յունիսեան պրօլետարական ապստամբութիւնը արեան մէջ խեղելու ժամանակ:

Կառավարութիւնը այդ ժամանակ օր առաջ հոգ տարւա նրա կազմակերպութեան մասին և հասաւ իր ցանկալի հետևանքներին: Փետրուարի 25-ին, յեղափոխութեան յաղթութեան միւս օրը, նորածին հանրապետութեան գոյութեան երկրորդ օրին, նոր թիււած ժամանակաւոր կառավարութիւնը «շարժուն գլարդիա» (garde mobile) է առաջացնում, որը պիտի պաշտպանէր հանրապետութիւնը «ներքին թշնամիներից», աւե-

լի ճիշտ պիտի պաշտպանէր բուրժագիային յաղթական պրոլետարիատից:

24 բատալիօն կազմակերպւեց, իւրաքանչիւրում 1058 մարդ, ուրեմն, ընդհամենը մօտաւորապէս 25 հազար մարդ: Այդ բատալիօններում ընդունում էին գլխաւորապէս, մի որոշ արհեստի չպատկանող 16 տարեկան պատանիներին: Նրանցից մեծամասնութիւնը պատկանում էր «գամեն»-ներին, ինչպէս նրանց անւանում էին Պարիզում, այսինքն փողոցային լակուներ էին, որոնք կտրւած լինելով իրենց ընտանիքներից, ապրում էին բաց երկնքի տակ և մի կերպ պահում իրենց գլուխր: Այդ տեսակի մարդկանց հազըրին նշանազգեստ, հրացան տւին: և պահում էին կազմաներում, օրեկան 1½ ֆրանկ վճարելով—նոր զինուրի համար բաւական նշանաւոր մի գումար:

Մշտական զօրքը, ի հարկէ, վիրաւորւած էր ըզգում իրեն, որ այդ «գամեն»-ները — փողոցային լակունները — աւելի մեծ ոռճիկ են ստանում, քան իրենք, մշտական զինուրները:

Հասկնալի է, որ այդ մարդկանց համար զինուրական ծառայութիւնը մի համեղ պատառ էր ներկայացնում, որից նրանք չէին ուզում հրաժարւել:

Բռնկւեց յունիսեան ապստամբութիւնը, հասաւ այն բռպէն, երբ հարկաւոր էր օգտւել այդ վարձու զինուրների ոյժից:

Զի կարելի բացասեկ այն բանը, որ ժամանակաւոր կառավարութիւնը, առաջ քան վերջնականապէս ուրոշելը գուրս բերել կազմաներից Պարիզի «երիտասարդ հերոսներին», քիչ մտատանջութեան մէջ չընկատ: Ի՞նչ անել այն դէպքում, եթէ նրանք անցնեն բանւորների կողմը: Անկասկած յաղթող կը հանդիսանայ այն մասն որի կողմը նրանք անցնեն, որովհետև նը-

րանք ոչ կրակից էին վախենում, ոչ էլ ջրից։ Սակայն, «մօքինեռը» ոչ միայն հաւատարիմ մնացին ժամանակաւոր կառավարութեան, այլ նոյնիսկ սպասածից աւելին արին։ Նրանք ոչ միայն իրենց հրացանները ուղղեցին բանւորների, իրենց հայրերի ու եղբայրների դէմ, որոնցից նրանց բաժանել էին միայն չորս ամիս առաջ, այլ և կուռում էին մի այնպիսի արիւնարբու կատաղութեամբ, որ կանոնաւոր զօրքերը նըրանց մօտ գառնուկներ էին երեսում։ Արբած լինելով օղիով և վառօդի ծուխով, «մօքինեռը» մոնչում էին վայրենի գաղանների նման։ մահ սփուրով իրենց շուրջը՝ անխնայ ջարդում, կոտորում էին մարդկերանց, կանանց, երեխաններին։ սպանում էին գերիններին, աւերում, հողի հետ էին հաւասարեցնում բոլորը, ինչ ընկնում էր նրանց ձեռքի տակ։

Պատմագէտ Շերը մի դէպք է յիշատակում, որը ցոյց է տալիս, թէ մինչև որ աստիճան վայրենի խենթութեան էին հասել այդ գամենները։ Մի անգամ, երբ կոհւը առժամանակ դադարեց, նրանցից մէկը զիմեց իր մօտ կանգնած ընկերին հետևեալ խօսքերով։ «կանգնի՛ր, իս կսպանեմ քեզ, ինչպէս շանը», — հրացանը արձակեց, և ընկերը ընկաւ անշունչ։ Այդ նոյն վայրկեանին մարդասպանը ուշքի եկաւ, սարսափած նայեց իւր զոհին և յուսահատ ընկաւ դիակի վրայ։

1848 թւին Մարքս և Էնգէլսը մեծ զայրոյթով գրում էին իրենց լրագրում։ «Պարիզում «մօքինեռը», վէճնայում՝ «խօրւատները», երկու քաղաքներում՝ «լացցարօնիները» — պրօլետարիատի զինւած և կաշռած տականքները, այսինքն լումպենպրօլետարիատը, դուրս եկան բանւորների, գիտակից պրօլետարիատի դէմ . . .»։

Ի՞նչ եղաւ այդ գկաշառւած և դինւած լումպենպրօլետարիատից յետագայ վիճակը։

Այն ժամանակ, երբ նրա աջակցութեամբ արեան մէջ խեղդւեց յունիսեան ապստամբութիւնը, ըէակցիան նորից բարձրացրեց իր գլուխը մի այնպիսի համարձակութեամբ ու լրպութեամբ, որ ամենուրէք համարեալ պաշարողական դրութիւն մտցրեց և առանց քաշելու սկսեց խեղդել ազատութեան իւրաքանչիւր արտայայտութիւն։ Նա իր ծանր թաթը դրեց փետրւարեան յեղափոխութեամբ ձեռք բերւած ընդհանուր ընտրողական իրաւունքի վրայ. օրինակ, նա 1850 թ. մայիս 15-ին նոր ընտրողական օրէնք մտցրեց, որով ձայնի իրաւունք էր տրում միայն այն անձնաւորութիւններին, որոնք մի տեղ ապրել են տարուց ոչ պակաս։ Այդ ճանապարհով Յ միլիոն պրօլետարիատը զրկւեց ընտրողական իրաւունքից, իսկ նրա հետ միասին անպայման և ամբողջ լումպենպրօլետարիատը։

Շարժուն գւարդիայի բատալիօնները արձակւած էին գեռ գրանից առաջ, որովհետեւ այլևս նրանց կարիք չէին զգում։ Նրանք իրենց գործը արդէն կատարել էին։ Կանոնաւոր զօրքերը հիմա իրենք արդէն կարող էին ճնշել բանւորներին։ Էլ ինչո՞ւ ուրեմն կերակերել ձրիակերներին և օրեկան մէկուկէս ֆրանկ վճարել։ «Մորիկները», հասկանալի է, անբաւական մնացին այդ բանով և 1850 թ. յունւարի վերջին պատգամաւորութիւն ուղարկեցին հանրապետութեան նախագահի մօտ, սակայն պատգամաւորութիւնը չընդունեց։ պարագլուխներին կալանաւորեցին, իսկ մնացածներին ցրեցին։

Այդ անխուսափելի վիճակն է սպասում հասարակութեան այն ճնշւած խաւերին, որոնք շնորհիւ իւրենց անգիտակցութեան և անբարոյականացման, անց-

Նում են շահագործողների կողմը՝ ընդդէմ շահագործողների, և օգնում են նրանց աւելի ամուր սեղմելու այն կապահքները, որոնցից յետագայում հէնց իրենք էլ են խեղդւում:

գ) «Դեկտեմբեր 10-ի ընկերութիւնը.

Այստեղ մէնք կպատմենք մի փորձի մասին էլ կազմակերպել լուսպէնպրօլետարիատը յետագիմական-նպատակների համար: Այս անգամ գործի գլուխ անցաւ լուի-նապօլեօնը, որը և կազմակերպեց նրան «ընկերութեան» մէջ: Այդ բանը մեզ համար հետաքըլք-քրական է և այն կողմից, որ «սև հարիւրեակների» նման կազմակերպութիւնները այժմ մեզ մօտ կարելի է հանդիպել ամեն քայլափոխում: Երբ արդէն ճնշւած էր յունիսեան ապստամբութիւնը, րէակցիօն հիմնագիր ժողովը ձեռնարկեց սահմանադրութեան մշակման, դրա հետ միասին նա դեմոկրատական հիմունքներով նախագահի վրայ խիստ ոչ-դեմոկրատական պարտաւուրութիւններ գրեց:

1848 թ. գեկտեմբերի 10-ին ամբողջ Ֆրանսիայում կատարեցին նախագահի ընտրութիւնը: Ընտրուց աւանտիւրիստ (արկածախնդիր) լուի-նապօլեօն Բօնապարտը. նրա ծագման մասին այնքան էլ լաւ լուրեր չէին պատում, սակայն ժողովուրդը նրան համարում էր նապօլեօն առաջինի քրոնորդին: Նոյն կերպ, ինչպէս և նրա ենթադրական քենին, Լուի-նապօլեօնը երեխա հասակից երազում էր Ֆրանսիայի կայսրը դառնալ. երկու անգամ նա փորձեց ի կտորարածել մտադրութիւնը, սակայն այդ նրան չէր յաջող-ըում:

Իսկ այժմ հասնելով այդպիսի բարձր գիրքի և ընտրուելով $5\frac{1}{2}$ միլիոն ժողովրդի կողմից Ֆրանսիայի

նախագահ, նա սկսեց պատրաստւել պետական յեղա-շըրջման համար, որպէսպի իր ձեռքը գրաւի պետու-թեան ամբողջ իշխանութիւնը: Այդ նպատակով նա կազմեց խուլիգանների «ընկերութիւն», որը սկսեց կոչւել «գեկտեմբերի 10-ի ընկերութիւն»:

Ահա թէ ինչ է գրում Կարլ Մարքսը դրա մասին իր «18-ը ըրբումէրա» գրքում.

«Զուտ բարեկործական հիմնարկութիւն հիմնելու պատրաւեկով, Պարիզի «ոսկեբերանները» բօնապարտա-կան ագէնտների ղեկավարութեամբ կազմակերպւեցին գաղտնի խմբերի մէջ. իսկ այդ խմբերի ամբողջ կաղ-մակերպութեան գլուխ կանգնած էր բօնապարտական գեներալը: Այդ ընկերութեան կազմի մէջ էին մըտ-նում ամէն տեսակի մուլթ ծագում ունեցող սնանկա-ցած քէֆչիներ ու դատարկապորտներ, որոնք իրենց ապրուստը զանազան կասկածելի ազգիւներից էին ձեռք ըրերում. յետոյ նրա մէջ մտնում էին ասպարէ-ցից քշւած, ըուրժուագիտ տականքներից դուրս հ-կած աւանտիւրիստները, թափառաշրջիկներ, պաշտօ-նաթող զինուորներ, արձակած բանտարկեալներ, տա-ժանակիր աշխատանքից փախաճներ, սրիկաներ, Փօ-կուսնիկներ, մուրացկաններ, ձէփկիրներ, խարերաններ թղթախաղում խարդախութիւն անողներ, բիլիարդի վերակացուներ, անառականոց պահողներ, բեռնակիր-ներ, գրականագէտներ, օրգանչիկներ, փալասչիներ, դանակ սրողներ, թիթեղապործներ և այն և այն: Մի խօսքով, թափառաշրջիկ մարդկանց անորոշ սանձարձակ մասսա, որին փառնսիացիները «բօգիմա» են անւանում: Այդ իրեն մօտիկ տարբերից բանապարտը և կազմեց «գեկտեմբերնը 10-ի ընկերութեան» կենտրոնը, Բարեկոր-ծական ընկերութիւն նա եղել է նոյնքան, որքան նրա բոլոր անդամները, իրա—Պօնաբարտի նման ձգտել են,



ի հաշիւ աշխատաւոր ապկի, ստեղծել իրենց բազդաւութիւնը: Ինչ որ եղել են բանւոր-սոցիալիստների համար ազգային արհեստանոցները, իսկ բուրժուա-հանրապետականների համար «շարժուն գւարդիան», Բօնապարտի համար եղել է «դեկտեմբեր 10-ի ընկերութիւնը», այդ օրդանապէս պատկառելի իրական ոյժը, որի վրայ յենւած էր նրա կուսակցութիւնը:

«Նրա ճանապարհորդութիւնների ժամանակ այդ ընկերութեան անդամների խուժանները միշտ ուղեկցում էին Բօնապարտին երկաթուղային գծերի վրայ, հրահանգ ունենալով այդ տեղերում ժողովրդի գեր խաղալ, ճասարակական հրձւանք արտայայտել, ոսնալ. «Կեցէ Կայսրը», վիրաւորել, ծեծի ննթարկել հանրապետականներին, և այդ բոլորը, ի հարկէ, ոստիկանութեան պաշտպանութեան տակ. իսկ վերադարձին Պարիդ այդ խուժանները, պարտաւոր էին առաջազրների նման նախազգուշացնել կամ քայլայել Բօնապարտի գէմ ուղղած թշնամական ցոյցերը: «Թեկտեմբեր 10-ի ընկերութիւնը», նա և միայն նա էր, ամբողջապէս նուիրւած Բօնապարտին՝ սա նրա ստեղծածն է. նրա սեփական մտքի մարմացումը»:

Օպօգիցիօն—ընդդիմադրական կուսակցութիւնները, ինքնըստինքեան հասկանալի է, ուշադրութիւն դարձրին այդ ընկերակցութեան վրայ:

Երկիւղ կրելով, որ կարող է այդ միութեան իսկական դէմքը պարզւել, Բօնապարտը պաշտօնապէս նրան փակեց, իսկ իրականապէս նա շարունակում էր իր գոյութիւնը և գործում էր մինչև 1851 թ. դեկտեմբերի 2-ի պետական յեղաշրջումը: Նապօլեօնը հասաւ իր նպատակին: Նա կայսր դարձաւ...

Դ) Կումպենպրօլետարխատը մեր յեղափոխութեան մէջ.

Լումպենպրօլետարիատի խաւար, յետադիմական դերը ուղարկան յեղափոխութեան մէջ ամենքին բաւականաչափ լաւ յայտնի է: Ուրիշ ոչոր, բայց եթէ նա է լցնում ևս հարիւրակների» խուժանական շարքերը, ասենք, նրանց մէջ մանում են տարրեր և հասարակական այլ գասակարգերից, մանաւանդ մանր բուրժուացիայից:

Այսպէս, խանութպանները, մօավաճառները, վարպետները, կառապանները, մանր չինովնիկները, գիւղացիութեան որոշ շերտերը ուրեադնիկների, ոստիկանների և շղիօնների զեկավարութեամբ—ահա թէ ովքեր են լցնում պօդրում չչիկներիի սև բանակների շարքերը, որոնք այդքան գժոխային չարիքներ առաջցըն Ռուսաստանում:

Այն ժամանակ, երբ պրօլետարիատը կռւի է գուրս գալիս, երբ նա զարմացնում է ամբողջ աշխարհնը իր հերոսական անձնազոհութեամբ, իր կարգապահութեամբ, «ևս հարիւրակները» իրենց միջամտութեամբ քայլայումն են առաջ բերում: Ես վերցնում եմ, օրինակ, յունիսեան յաւերժայիշատակ օրերը Օդեսայում, երբ խուլիզաններն իրենց հրդէհածգութիւններով նաւահանգստում միանգամայն տեսարանը փոխեցին: Վարշավայում, Լօգովում, Բելօսովոկում լումպենպրօլետարիատը այնքան էր խանգարում շարժման, որ բանւորները ստիպւած էին նրանց գէմ ալինահեղ կռիւ մդել:

Սակայն գաղանային կատաղութիւն արտայայտեց նա ջարդերի ժամանակ, որոնք ծագում էին ամենուրեք Ռուսաստանում: Ամենքի յիշութեան մէջ գետարմ են այդ գաղանային սպանութիւնները, կողոպուտներն ու հրդէհները: Ամենից շատ վասա կրեցին

պօպիօմներից ճրէաները անբանց վիճակիւնց կրել ամեւ-
նաարիւնալից ու սոսկալի զոհերը: Հրէաների հետ հա-
մահաւասար այցդ գժոխային սոսկումների առանջնաքին
և նվթարկիւցին հայիւրը մովկասում աւ ամենուրեքը նոյն
վիճակի մէջ է ինտելիգենցիան, «գործադուլ անողնեցը»
և ընդհանրասպէս «բուժութիշիները»: Աւելորդ է յիշ
շատակել այնպիսի ջարգերի ժամանակնական գումարից
Օդիսայից Մօգիւեվսկու, Ելիզաւետպրանդուկու և այլն
Աւելորդ է նոյնպէս մտարել Տօմակու մտամին որտեղ
մտրգկանց կենդանի էին այցրում, ինտելիգենցիայի
ջարգերի ժամանակն Բալաջովում, Նիժնի Նօվգորոդում, և
ուրիշ տեղերում վերջապէս ու հարիւրակներից գործ
ծովնէութիւնները հոկտեմբերեան մանիքէասից յիշանց,
ընզմիշաւ կման մարդկանց յիշողութիւնների մէջ, ու
րոնք տեսել են մէ մինչեւ որ աստիճան կարող են դաւ-
գանանալ հասարակութեան այդ տականքները: «Սև թաւ-
րիւրակներից մօրիւլուց յիշանց ոյժերից կենտրոնացուցը
մինչ այն աստիճան հեռու է դնացելը որ անուշադիրը
չեն թողել նայնիւկ Սահալինի ատամանակիրներին: ուղա-
րաց պատճենուածին ուղարաց պատճենուածին մաս
ու ուղարաց նա նորույն ան և առջեց ջուռ մէ մէ ուղ-
արաց առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-

տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-

տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-
տուածին առաջանձը ուղարաց պատճենուածին մասնակ-

թօւնի որդիկոք լումպենպոլետարիամը այլպիսի բա-
ղեալներ ենց ճամփապարհներով է ձփուռում երանց ի-
րականաց մանը: Հասարակութեան իսկական տականքնե-
րի մասին այս գէպը ու կարող լինել, նրանք հնառու-
են ու մի որեւէ իրեալից, նրանք ամբողջապէս կը-
լանաւած են իրենց օրւայ հացը կողապըւաթ ու բնուու-
թեան միջոցով գտնելով:

Լումպենպարիօնտարիատի ըարձր խաւերի մէջ, ու-
րոնք միանում են բանւոր պրօլետարիատի պահեստի
գնդին, յեղափոխական անարիխիզմի գաղափար է յդու-
նում: Յեղափոխական անարիխիմները ձփուռ են ու-
շընչացնել պիտութիւնը, նրանք ոչ մի օրէնք չեն
ճանաչում և երազում են ալատ արտադրողների ա-
ղատ անսույցիացիայի—միութեան մասին, նրանք երա-
զում են առանձին անհատի կատարեալ անկախութեան
մասին ումից էլ գալինի իրեալին հանուելու
համար նրանք չեն միանում մի կազմակերպւած կու-
սակցութեան մէջ, որովհետեւ իրաքանչիւր կուսակցու-
թիւն որոշ գիսցիպիլինա, կարգապահաւելիւն է պահան-
ջում, իսկ այդ բանը հակառակում է նրանց սկզբունք-
ներին: Նրանց տաքտիկան խիստ արրեց է, աւելի
հանգիստ անարիխիմները խօսքի պրօպագանդով են
զրագուում, իսկ աւելի տաքք գլուխները գործով պրօ-
պագանդայով՝ ուղմինքներով, ատրճանակներով դասակներ-
բակնեմ տարրութ մաքաղանու յանդպատ և պահեր ու-
ժանանց պարփակութիւն մօտ ամեն բան անորոշ և ան-
զիտական է, ինչպէս նրանց ծրագիրը, նոյնպէս և
նրանց պարփակութիւնը: Անարիխիզմը ոչ մի կերպ չի կարող
պարաբար հոգ գտնել արդիւնաբերական պրօլետարիա-
տի մէջ, այն պրօլետարիատի, որը իր աշխատանքներ
է ապրում, այն ինչ նա հեշտութեամբ է կարողանում
յաջողութիւն գտնել մանր-բուրժուազիայի, գիւղա-

ցիութեան, ինտելիգենցիայի և լումպենպրօլետարիատի մի մասի մէջ։ Արհեստաւորը տէր է իր արհեստանոցին, գիւղացին—իր մի կտոր հողին, ինտելիգենտը—իր դիպլոմին, իսկ լումպենպրօլետարիատը—աղատ թոշուն է, որը ոչոքից չի կամենում կախւած լինել։ Այդպիսով, անարխիզմը և լումպենպրօլետարիատը սերտ կերպով կապւած են իրար հետ։ Ի հարկէ, բոլոր անարխիստները—լումպենպրօլետարներ չեն, և ոչ էլ բոլոր լումպենպրօլետարիատները—անարխիստներ։ սակայն լումպենպրօլետարիատի մի մասը ընդունակ է ընթանելու անարխիզմի գաղափարները, իսկ անարխիստների մի մասը պատկանում է լումպենպրօլետարիատին։

Սնարխիզմ—դա հակատրամարանօրէն կառուցւած, անաւարտ մի ուսուցում է. նա կազմւած է այնքան զանազան մեծութեան մասնիկներից, որքան հեղինակներ են աշխատել նրա զարդացման վրա։

Պրուդօն և Տօլսոյ, կրապօտկին և Ռաւաշօլ, Բակունին և Ռեկլիւ—դրանք ամենքը անարխիստներ են։

Ոչ մի հասարակական դասակարգ այդքան գոհենիկ կերպով չի հասկանում անարխիզմը, ինչպէս լումպենպրօլետարիատը։ Նրա գլխի մէջ անարխիզմը դառնում է «լումպեն-անարխիզմ», որի արտայայտութիւնը դժւար է տարբերել սովորական կողոպառներից և բռնութիւններից։ Գերկները լօնդօնի անարխիստների մի լրագրից բերում է հետեւել կոչը։

«Շուտ! անցիր գործի! վերցրու լոմը, կացինը, մուրճը, երկաթէ ձողը! վերցրու գայլիկունը, քալիաթին, սղոցը, գուրը! վերցրու զառիկը, պարկը, թոկը, նիզակը, ատրճանակը, ոռոմը! Հուռուա...»։

Ի՞նչ ընդհանուր բան կայ այդ արիւնարբու գուցների և պրօլետարական իդէալի մէջ, այդ տիմար, զազրելի գատարկախօսութեան և այն միջոցների մէջ, որոնցով պրօլետարիատը իրագործում է իր իդէալը։

Վերջին ժամանակները մուսաստանի մի քանի վայրելում անարխիզմը տարածւեց լումպենպրօլետարիատի որոշ մասի և արդինաբերական պահեստի գնդի մի մասի մէջ, որը չնորհիւ կրիզիսների մեծ չափերով էր աճել. «Գործով պրօպագանդը», վերև բերած կոչի ոգով, մղում էր, միայն քիչ այլ կերպ։ Մանաւանդ մօդա է դառել, այսպէս անւանւած, «Եքսպրօպրիացիան»։ կարելի է ասել, որ ոչ մի վարդապետութիւն այդպէս ակնյայտնի կերպով ցոյց չի տւել իր թէօրիտիքական անհիմնաւորումը, ինչպէս անարխիզմը, և ոչ մի բանում այդպէս պարզ չի արտացոլել նրա խառնախնթորութիւնը, ինչպէս «Եքսպրօպրիացիա» խօսքի հասկացողութեան մէջ, որը վերցրւած է Մարքսից։

Կարլ Մարքսը «Կապիտալի» I հատորի վերջում խօսում է «Եքսպրօպրիատօնների էքսպրօպրիացիայի» մասին, այսինքն արտադրողական միջոցների մասնաւոր սեփականութիւնը հասարակական սեփականութիւն դարձնելու մասին։

Մեր խելօր լումպէն—անարխիստները ցանկանում են հէնց այժմ այդ իրականացնել կեանքի մէջ. նրանք ատրճանակներով ու ոռոմերերով մտնում են տըները և փող պահանջում։ Սահմանը անարխիզմի և ամենասովորական կողոպուտի մէջ բոլորովին հարթւել է. Յաճախ պարզում էր, որ իրենց անարխիստներ հրատարակող, ատրճանակները ձեռքերնին փող կորզող մարդիկը—դուրս են եկել հասարակ սրիկաներ։

Այսպահանդիպէմ, որը տարածւել է յիշափոխութեան ամենալողացքութան ժամանակը, այդ քայլքայժմունքէմ, որը լուսագենպրօլետարիատը՝ մտցնում է անդիտակից մասսաների մէջ—անհրաժեշտ է ոյժեղ կոիւ յայտաբարել:



«Ազգային գրադարան»



NL0143306

ADM.

2-5704_a

3-81

8M1